ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 293-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2021թ. հոկտեմբերի թիվ 293-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3- 4 էջեր

Ամփոփագիր 4 - 6 էջեր

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 6 – 15 էջեր

Անհամապատասխանությունների
վերաբերյալ գրառումներ 15 - 19 էջեր

Արձանագրված այլ փաստեր 19 – 24 էջեր

Առաջարկություններ 24 էջ

Հավելված արդյունքի չափորոշիչների ցուցանիշների վերաբերյալ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 226-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշներ	ՀՀ կառավարության 30.12.20202թ. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 6-ից մինչև հոկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության 2021 թվականի վեց ամիսների ծախսերի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 27,038,475.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.1 %-ը: 2021 թվականին ՀՀ պետական բյուջեով ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումները խմբավորվել են երկու ծրագրերում:

ՀՀ ոստիկանության կողմից հանդերձանքի գնման համար կնքված պայմանագրերի հաշվեքննությամբ արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության և «Վանգակ» ՍՊԸ միջև կնքվել է պայմանագիր՝ 77,869.8 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երեք անվանում հանդերձանք: «Վանգակ» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 7,120.6 հազ. դրամի հանդերձանք:
- ՀՀ ոստիկանության և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է պայմանագիր՝ 137,664.5 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 3 անվանում հանդերձանք: «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 4,307.4 հազ. դրամի հանդերձանք:
- ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է պայմանագիր՝ 59,100.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 4 անվանում հանդերձանք: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 8,514.0 հազ. դրամի հանդերձանք:

Հետևաբար, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ այդ երեք պայմանագրերի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ: Հանդերձանքի գնման համար կնքած մնացած պայմանագրերի շրջանակում մատակարարումները իրականացվել են գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում: Հաշվեքննությամբ արձանագրվել է նաև, որ համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքապետը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

1) Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով: Սակայն, Երևան քաղաքում ճանապարհային գծանշումներ ձեռք բերելու համար ՀՀ պետական բյուջեից 475,000.0 հազ. դրամ նախատեսվել է ՀՀ ոստիկանության 2021 թվականի գնումների պլանի «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով: ՀՀ ոստիկանության կողմից գնման ձև է սահմանվել բաց մրցույթը:

Մրցույթին մասնակցել են երեք կազմակերպություններ՝ «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, որը պետական գրանցում է ստացել 2020 թվականի դեկտեմբերի 24-ին, «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Ասկետ-16» ՍՊԸ՝ ներկայացնելով համապատասխանաբար՝ 466,776.0 հազ. դրամ, 466,800.0 հազ. դրամ և 468,000.0 հազ. դրամ գնային առաջարկներ: Գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել ներկայացված նվազագույն գնային առաջարկը: Դրանից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի և «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում, չնայած ներկայացված գնային առաջարկների ընդամենը 24.0 հազ. դրամի տարբերության, գնահատող հանձնաժողովին չի հաջողվել նվազեցնել մրցույթին առաջարկված գները, և 2021 թվականի հունվարի 16-ին կնքվել է «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ և ՀՀ

ոստիկանության միջև ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը:

Պայմանագրի շրջանակում 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ, համաձայն կազմված հանձնման ընդունման արձանագրությունների, ՀՀ ոստիկանությունը ընկերությանը փոխանցել է գումարային 151,547.7 հազ. դրամ:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի գրավոր առաջադրանքը կատարողի կողմից ստանալու օրվանից 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում: Հաշվեքննությամբ պարզվել է, որ հանձնման ընդունման արձանագրությունների կազմման համար «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հաշվետվություններում առկա են նաև գծանշման վայրեր, որոնք ներառված չեն ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված գծանշման կատարման առաջադրանքներում:

Պայմանագրի 5.3 կետով ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում նախատեսված է չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով տույժ: Սակայն, 2021 թվականի ապրիլ և մայիս ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքների կատարման համար հանձնման ընդունման արձանագրությունները կազմվել են ամփոփ, յուրաքանչյուր ամսվա համար, և արդյունքում հնարավոր չէ պարզել մատուցված ծառայություններների համապատասխանությունը գնման ժամանակացույցին:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2021 թվականի վեց ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվության հավաքագրել է 13,568,196.2 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ	Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ
Պետական տուրքեր	3,694,936.0	3,049,127.0
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	11,473.5	10,269.5
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	4,058,792.8	6,466,714.1
ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր	1,440,473.4	4,035,930.3
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	10,000.0	5,845.4
Պետությանը պատճառած վնասի փոխհատուցումից մուտքեր	100.0	309.9
Ընդամենը	**9,215,775.7**	**13,568,196.2**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 4,352,420.5 հազ. դրամով ավելի եկամուտներ: Եկամուտների ավելացումը պայմանավորված է պետական պահպանություն իրականացնող ստորաբաժանումների կողմից շուրջ 2.0 մլրդ դրամ մուտքերի հավաքագրումով, որը ծրագրային ցուցանիշներով նախատեսված չէր, քանի որ 2021 թվականից նախատեսվել էր դադարեցնել ոստիկանության ստորաբաժանումների կողմից տվյալ ծառայությունների մատուցումը: Բացի այդ, երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերը գերակատարվել են շուրջ 2,4 մլրդ դրամով:

2021 թվականի վեց ամիսների համար ՀՀ ոստիկանությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 30,772,114.2 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 32,539,567.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 27,060,352.8 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	4,975,828.6	4,013,875.6	4,009,698.4	4,509,817.8
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	2,046,115.2	1,932,274.1	1,931,675.6	1,937,392.4
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	2,820,981.9	2,479,279.6	2,477,451.1	2,503,128.8
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	5,964,715.5	4,913,726.6	4,913,156.2	5,488,916.2
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	1,042,.0	840.0	840.0	66,033.5
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	928,492.0	816,052.4	814,291.7	845,562.8
Առողջապահական ծառայությունների տրամադրում	242,926.4	233,229.9	233,229.9	233,263.3
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	15,497.0	11,495.0	11,495.0	13,293.4
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	12,433,126.5	11,977,662.8	11,964,721.2	12,044,537.3

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	5,852.3	5,852.3	5,852.3	5,852.3
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	2,244,183.0	-	-	360.0
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	75.0	75.0	75.0	499.7
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում	26,546.9	23,530.3	23,530.3	93,767.3
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	20,334.2	-	-	-
Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում	30,900.0	-	-	-
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	460,339.7	383,616.5	383,616.5	383,616.5
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	193,725.6	161,438.0	161,438.0	161,438.0
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	128,885.6	107,404.7	107,404.7	107,404.7
Ընդամենը	32,539,567.4	27,060,352.8	27,038,475.9	28,394,884.0

ՀՀ ոստիկանության 2021 թվականի վեց ամիսների ծախսերի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 27,038,475.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.1 %-ը:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեով ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումները խմբավորվել են երկու ծրագրերում:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրով, որի 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 31,756,616.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 26,407,893.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.2 %-ը, դրամարկղային ծախսը՝ 26,386,016.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.1 %-ը: Ծրագրի միջոցառումները տասնհինգն են.

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 4,975,828.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,013,875.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.7 %-ը, դրամարկղային ծախսը՝ 4,009,698.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.6 %-ը: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ, որից երեքի՝ ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերի թիվ, ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերից բավարարվածների թիվ և ոստիկանությունում իգական սեռի ծառայողների թվաքանակի մասնաբաժին, տոկոս չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից (հավելված):
- «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,046,115.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,932,274.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.4 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,931,675.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.4 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,820,981.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,479,279.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 2,477,451.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ չափորոշիչի փաստացի ցուցանիշը պակաս է ճշտված պլանով նախատեսվածից:
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման

կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,964,715.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,913,726.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.4 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 4,913,156.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.4 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ, որից վեցի՝ նշանակված տուգանքների քանակ, տրամադրված հաշվառման վկայագրերի քանակ, ընդունված տեսական և գործնական քննությունների թիվ, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցելու թիվ, վարման իրավունքի վկայականի կրկնօրինակի տրամադրում, հատ և արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների թիվ չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:

- «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,042.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 840.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.6 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից տրամադրված հաշվառման համարանիշերի քանակ չափորոշիչի փաստացի ցուցանիշը պակաս է ճշտված պլանով նախատեսվածից:
- «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 928,492.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 816,052.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 814,291.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.7 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ, որից վեցի՝ տրված վիզաների թիվ, տրված կացության ժամանակավոր և մշտական կարգավիճակների թիվ, քաղաքացիների ըստ

բնակության վայրի հաշվառման թիվ, քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու թիվ, տրված կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի թիվ և կոնվենցիոն փաստաթղթերի թիվ չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:

- «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 242,926.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 233,229.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.0 %-ը: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ, որից երեքի՝ ամբուլատոր պոլիկլինիկական այցելությունների թիվ, ոստիկանության բուժհաստատություններում փորձաքննության ենթարկված անձանց թիվ և հիվանդությունների դեպքերի միջին տևողություն, օր չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:
- «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 15,497.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 11,495.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 74.2 %-ը: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ ամբուլատոր պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողների տրամադրված դեղորայքի տեսակների, հատ, որի փաստացի ցուցանիշը պակաս է ճշտված պլանով նախատեսվածից:
- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 12,433,126.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 11,977,662.8 հազ. դրամ կամ ճշտված

պլանի 96.3 %-ը, դրամարկղային ծախսը՝ 11,964,721.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.2 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնչորս արդյունքի չափորոշիչներ, որից ութի՝ հսկողության տակ գտնվող անձանց թիվ, դիմումների և հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերի թիվ, հայտնաբերված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվ, հայտնաբերված թմրամիջոցների ապօրինի շրջանառության թիվ, ձեռբակալված անձանց պահելու վայրերում ձեռբակալված և կալանավորված անձանց թիվ, զանգվածային միջոցառումների թիվը, որոնց ընթացքում ապահովվել է հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, ոստիկանության զորքերի պարեկային կարգախմբերի կողմից վերահսկվող երթուղիների միջին օրական երկարություն, կմ և ոստիկանության զորքերի պարեկային կարգախմբերի ծառայության տևողությունը, օր/ժամ չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:

- «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառման կատարման 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,852.3 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 5,852.3 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,244,183.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով

նախատեսվել է 75.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 75.0 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

- «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 26,546.9 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 23,530.3 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 88.6 %-ով: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 20,334.2 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում» միջոցառման կատարման 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 30,900.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ:

«Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագրով, որի 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 782,950.9 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 652,459.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

- «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 460,339.7 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 383,616.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որից երեքի՝ բակալավրիատի ծրագրով առկա ուսուցում ստացող ոստիկանության

ծառայողների թիվ, մագիստրատուրայի ծրագրով առկա ուսուցում ստացող ոստիկանության ծառայողների թիվ և բակալավրիատի ծրագրով առկա ուսուցում ստացող ոստիկանության իգական սեռի ծառայողների թիվ չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:

- «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 193,725.6 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 161,438.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ, որից երկուսի՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ոստիկանության ծառայողների թիվ և միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ոստիկանության իգական սեռի ծառայողների թիվ չափորոշիչների փաստացի ցուցանիշները պակաս են ճշտված պլանով նախատեսվածից:
- «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 128,885.6 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 107,404.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ, որից մեկի՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ոստիկանության ծառայողների թիվ չափորոշիչի փաստացի ցուցանիշը պակաս է ճշտված պլանով նախատեսվածից:

ՀՀ ոստիկանության ծրագրերով սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշները ներկայացված են հավելվածում:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ ոստիկանության կողմից հանդերձանքի գնման համար կնքած պայմանագրերի հաշվեքննությամբ արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության և «Վանգակ» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 10.05.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-2 պայմանագիր՝ 77,869.8 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երեք անվանում հանդերձանք: «Վանգակ» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 7,120.6 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 8 աշխատանքային օրով: Հետևաբար, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ:
- ՀՀ ոստիկանության և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 10.05.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-3 պայմանագիր՝ 137,664.5 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 3 անվանում հանդերձանք: «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 4,307.4 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 8 աշխատանքային օրով: Հետևաբար, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ:
- ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 10.05.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-5 պայմանագիր՝ 59,100.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 4 անվանում հանդերձանք: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 8,514.0 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 8 աշխատանքային օրով: Հետևաբար, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ:

Հանդերձանքի գնման համար կնքած մնացած պայմանագրերի շրջանակում մատակարարումները իրականացվել են գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքապետը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

1) Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով: Սակայն, Երևան քաղաքում ճանապարհային գծանշումներ ձեռք բերելու համար ՀՀ պետական բյուջեից 475,000.0 հազ. դրամ նախատեսվել է ՀՀ ոստիկանության 2021 թվականի գնումների պլանի «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով: ՀՀ ոստիկանության կողմից գնման ձև է սահմանվել բաց մրցույթը: ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից ներկայացված գնման հայտին կից տեղեկանք հիմնավորումով նշվել է, որ ճանապարհային գծանշումների ձեռք բերումը խիստ հրատապ է, քանի որ աշխատանքների կատարումը պետք է իրականացվի 2021 թվականի առաջին աշխատանքային օրվանից, և գնումը կատարելու համար անհրաժեշտ է իրականացնել հրատապ բաց մրցույթ: ՀՀ ոստիկանությունը գծանշման ծառայություններ ձեռք բերելու համար 11.12.2020թ. ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 ծածկագրով հայտարարել է հրատապ բաց մրցույթ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի դեկտեմբերի 28-ը: Մրցույթի հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է՝ «մասնակից կազմակերպությունում աշխատող նվազագույնը 20 աշխատակիցների առկայություն՝ նմանատիպ աշխատանքային փորձի առկայությամբ, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայություն՝ նվազագույնը չորս բեռնատար ավտոմեքենա, գծանշման համար անհրաժեշտ նվազագույնը երեք գծանշող սարքավորում և մեկ մեքենա,

տերմոպլաստիկի համար նախատեսված երկու մեքենասարքավորում, սառը պլաստիկի համար նախատեսված սարքավորում, գծանշման նվազագույնը մեկ ապագծանշող սարքավորում և փոշեմաքրման նվազագույնը երեք սարքավորում»: Սակայն, մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված դիմում հայտարարություններով աշխատանքային փորձի առկայությամբ աշխատակիցների, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Մրցույթին մասնակցել են երեք կազմակերպություններ՝ «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, որը պետական գրանցում է ստացել 2020 թվականի դեկտեմբերի 24-ին, «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Ասկետ-16» ՍՊԸ՝ ներկայացնելով համապատասխանաբար՝ 466,776.0 հազ. դրամ, 466,800.0 հազ. դրամ և 468,000.0 հազ. դրամ գնային առաջարկներ: Գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել ներկայացված նվազագույն գնային առաջարկը: Դրանից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի և «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում, չնայած ներկայացված գնային առաջարկների ընդամենը 24.0 հազ. դրամի տարբերության, գնահատող հանձնաժողովին չի հաջողվել նվազեցնել մրցույթին առաջարկված գները: 2021 թվականի հունվարի 14-ին «Ուկռինվեստ» ՍՊԸ տնօրենը ստանձնել է նաև «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ տնօրենի պաշտոնը (2021 թվականի փետրվարի 8-ից հանդիսանում է «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ 100 տոկոս բաժնետեր) և 2021 թվականի հունվարի 16-ին կնքել է «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ և ՀՀ ոստիկանության միջև թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը:

Պայմանագրի շրջանակում 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ, համաձայն կազմված 03.05.2021թ. և 01.06.2021թ հանձնման ընդունման արձանագրությունների, ՀՀ ոստիկանությունը ընկերությանը փոխանցել է գումարային 151,547.7 հազ. դրամ:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի գրավոր առաջադրանքը կատարողի կողմից ստանալու օրվանից 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում: Հաշվեքննությամբ պարզվել է, որ հանձնման ընդունման արձանագրությունների կազմման համար «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հաշվետվություններում առկա են նաև գծանշման վայրեր, որոնք ներառված չեն ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված գծանշման կատարման առաջադրանքներում: Մասնավորապես, թիվ 2 հանձնման ընդունման արձանագրությունում առկա է Թումանյան փողոցում 1866 գծմ և Սասունցի Դավիթ փողոցում 1293 գծմ իրականացված գծանշումների ծավալ, որը սահմանված չէր ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքներով:

Պայմանագրի 5.3 կետով ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում նախատեսված է չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով տույժ: Սակայն, 2021 թվականի ապրիլ և մայիս ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքների կատարման համար հանձնման ընդունման արձանագրությունները կազմվել են ամփոփ, յուրաքանչյուր ամսվա համար, և արդյունքում հնարավոր չէ պարզել մատուցված ծառայություններների համապատասխանությունը գնման ժամանակացույցին:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր,
2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» ու «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառումների շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր,
3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր,
4. Առանձին միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների և ծառայությունների գնման համար կնքված 24 պայմանագրեր, որով 2021 թվականի վեց ամիսներին կատարված ծախսերը գումարային կազմել են 372,326.8 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2), «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» (միջոցառում 3) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 4) բյուջետային

ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 174 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառումներ 2 և 3		Միջոցառում 4	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	2	2	1	1	1	1
Ավագ խումբ	6	6	0	1	1	1
Միջին խումբ	38	38	2	2	1	1
Կրտսեր խումբ	59	59	28	28	1	1
Քաղ. հատուկ ծառայող	1	1	0	0	6	6
Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	6	6	19	19	1	1
Ընդամենը	112	112	50	51	11	11

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության եվ փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը եվ վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշման, ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական եվ փրկարար ծառայություններում ծառայության

առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը եվ կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշման և ՀՀ ոստիկանության պետի 11.09.2019թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների (աշխատողների) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները) հաստատելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի մարտի 21-ի թիվ 3-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Լ հրամանի պահանջներին համապատասխան:

Հաշվեքննության ենթարկված առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների և ծառայությունների գնման համար կնքված 1,241,637.5 հազ. դրամի պայմանագրերով 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ վճարումը կազմել է 372,326.8 հազ. դրամ, որը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Վճարված գումար
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
ՄԷՍ-ՏԵՔՍ ՍՊԸ	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-1	16,600.0	5,810.0
Վանգակ ՍՊԸ	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-2	77,869.8	4,545.8
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-3	137,664.5	16,331.0
ԱՆԳԱ ՏՐԱՆՍ ՍՊԸ	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-4	8,988.0	1,348.2
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-5	59,100.0	1,684.8
Մանանկ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/1	15,318.0	5,361.3
Վանգակ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/2	7,920.0	2,772.0
Ա/Ձ Պետրոս Ղարագյոզյան Միսակի	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/3	2,100.0	728.0
ՄԱՐ-ՄԱԴԷԼ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/4	2,070.0	724.5
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/5	2,427.6	849.7
ՌԻՄՆԱ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/6	717.5	251.1
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/7	2,817.0	986.0
Կոտայքկոշ ԲԲԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/8	4,344.0	1,520.4
Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/9	590.3	206.6
ԱՁ Ադրինե Մարգարյան Արմենի	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/10	1,760.0	264.0
ԱԲԻ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/11	7,200.0	2,520.0
ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32/12	3,824.4	1,338.5
ՌԻՄՆԱ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33/1	17,250.0	2,587.5

Լ'ՏԱՇԻՐ-ԿԱՐԼ'ՓԲԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33/2	62,495.8	9,374.4
Ա/Ձ Պետրոս Ղարագյոզյան Միսակի	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33/3	13,660.0	4,781.0
Ռասսի ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33/4	28,971.0	10,139.9
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33/5	25,023.6	8,579.5
ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2021-ՈՍ-2-ՎԱՌԵԼԻՔ-37	276,150.0	138,075.0
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
'ՌԵԳԻՈՆՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ' ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19	466,776.0	151,547.7
Ընդամենը		1,241,637.5	372,326.8

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանությունը «Սիփիէս Օիլ» ՍՊԸ հետ 2021 թվականի ապրիլի 2-ին կնքել է 276,150.0 հազ. դրամի պայմանագիր՝ 750000 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 368.2 դրամով: 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարվել է 138,075.0 հազ. դրամի 375000 լիտր բենզին:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն: Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

Անհամապատասխանություն	**Իրավական ակտ**
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Վանգակ» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-2 պայմանագիր

Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-3 պայմանագիր
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2021-20-5 պայմանագիր
Իրականացվել են առաջադրանքով չնախատեսված գծանշման ծավալներ	«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 պայմանագիր
Հնարավոր չէ պարզել մատուցված ծառայությունների համապատասխանությունը գնման ժամանակացույցին և հաշվարկել պայմանագրով նախատեսված տույժը	«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 պայմանագիր

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ չունի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանությանը՝

իրականացնել հսկողություն ճանապարհային գծանշումները ներկայացված առաջադրանքներին համապատասխան և սահմանված ժամկետներում կատարելու նկատմամբ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

Դավիթ Չիբուխչյան

Հավելված

2021 թվականի վեց ամիսների համար ՀՀ ոստիկանության ծրագրերով սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշների տարբերություններ

Արդյունքի չափորոշիչ	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Տարբերություն
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
Ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերի թիվ, հատ	1900	1290	610
Ոստիկանության դեմ դատարաններում բերված /վարույթում առկա/ հայցերից բավարարվածների թիվ, հատ	2000	1341	659
Ոստիկանությունում իգական սեռի ծառայողների/աշխատողների թվաքանակի մասնաբաժին, տոկոս	18.8	18.1	0.7
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում			
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ, հատ	3520	3337	183
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
ՃՈ կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության օրենսդրության պահանջների խախտման համար նշանակված տուգանքների և ճանապարհային երթևեկության կանոնների, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական նորմերի պահանջների խախտման համար նշանակված տուգանքների քանակ, հատ	1210000	993918	216082
Տրամադրված հաշվառման վկայագրերի քանակ, հատ	120000	72653	47347

Ընդունված տեսական և գործնական քննությունների թիվ, հատ	60000	42585	17415
Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված գործողություններ, հատ	400	157	243
Վարման իրավունքի վկայականի կրկնօրինակի տրամադրում, հատ	20	12	8
Արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների թիվ, հատ	2200	2169	31
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում			
Տրամադրված հաշվառման համարանիշերի քանակ, հատ	200000	141006	58994
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում			
Տրված վիզաների թիվ, հատ	52000	816	51184
Տրված կացության ժամանակավոր և մշտական կարգավիճակների թիվ, հատ	4600	3894	706
Քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառման թիվ, հատ	104000	103957	43
Քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու թիվ, հատ	70000	65162	4838
Տրված կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի թիվ, հատ	6000	5830	170
Կոնվենցիոն փաստաթղթերի թիվ, հատ	160	81	79
Առողջապահական ծառայությունների տրամադրում			
Ամբուլատոր-պոլիկլինիկական այցելությունների թիվ, հատ	60000	38476	21524
ՈԲՀ-ում փորձաքննության ենթարկված անձանց թիվ, անձ	3000	1318	1682

Աշխատունակության ժամանակավոր կորստով ուղեկցվող հիվանդությունների դեպքերի միջին տեւողություն, օր	6	5.3	0.7
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց			
Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին տրամադրված դեղորայքի տեսականի, հատ	146	56	90
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար			
Համայնքային ոստիկանության ու անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումներում հսկողության տակ գտնվող անձանց թիվ, հատ	7400	6698	702
Դիմումների և հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերի թիվ, հատ	130000	97000	33000
Հայտնաբերված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվ, հատ	600	465	135
Հայտնաբերված թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուսորների ապօրինի շրջանառության թիվ, հատ	500	379	121
Ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված և կալանանավորված անձանց թիվ, անձ	1400	1046	354
Զանգվածային միջոցառումների թիվը, որոնց ընթացքում ապահովվել է հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, հատ	2500	1567	933
Ոստիկանության զորքերի պարեկային յուրաքանչյուր կարգախմբի կողմից վերահսկվող	3570	0	3570

երթուղիների միջին օրական երկարություն, կմ			
Ոստիկանության զորքերի պարեկային կարգախմբերի ծառայության տևողությունը, օր/ժամ	6	0	6
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն			
Բակալավրիատի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	167	138	29
Մագիստրատուրայի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	21	4	17
Բակալավրիատի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության իգական սեռի ծառայողների թիվ, անձ	40	38	2
Միջին մասնագիտական կրթության ծառայություն			
Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	100	70	30
Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության իգական սեռի ծառայողների թիվ, անձ	27	25	2
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն			
Նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	60	21	39